«ՀՀ-ում երեխայի պաշտպանությունն ու բարեկեցությունը»
ազգային համաժողովի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2016 թվականի նոյեմբերի 18-ին «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը, «Վորլդ Վիժն Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպությունը, «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը համատեղ կազմակերպում են «ՀՀ-ում երեխայի պաշտպանությունն ու բարեկեցությունը» թեմայով ազգային համաժողով Հայաստանի ամերիկյան համալսարանի Փարամազ Ավետիսյան մասնաշենքի Մանուկյան սրահում (հասցե՝ Մ. Բաղրամյան 40):

Համաժողովի նպատակն է հնարավորություն տալ քաղաքացիական հասարակության կառույցներին ձևավորել միասնական օրակարգ երեխաների իրավունքների և բարեկեցության ոլորտում: **Համաժողովը կազմակերպվելու է երեխաների և երիտասարդների մասնակցությամբ՝ ապահովելու վերջիններիս մասնակցայնության և ձայնի լսված լինելու իրավունքի իրականացումը:**

Համաժողովի մասնակիցները կրթության, առողջապահության, երեխայի իրավունքների և պաշտպանության ոլորտի իրավիճակը, արձանագրած ձեռքբերումներն ու խնդիրները կքննարկեն մասնագետների, պետական կառավարման մարմինների և այլ շահագրգիռ կողմերի հետ և համատեղ կձևակերպեն հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկներ:

Համաժողովի ընթացքում ձևակերպված առաջարկությունները կներկայացվեն համապատասխան գերատեսչություններ՝ ՀՀ-ում երեխայի իրավունքների և սոցիալական պաշտպանության ոլորտի ռազմավարական փաստաթղթերի մշակման ընթացքում հաշվի առնելու, 2017թ. Ազգային ժողովի ընտրություններից հետո կառավարության ծրագրում, ինչպես նաև միջազգային կառույցների և դոնորներ կազմակերպությունների ռազմավարություններում երեխաների խնդիրների պատշաճ արտացոլման համար:

Համաժողովի աշխատանքային լեզուն հայերենն է: Համաժամանակյա թարգմանություն կապահովվի լիագումար նիստի ընթացքում:

Դիմելու ընթացակարգ

Համաժողովին մասնակցելու համար խնդրում ենք մինչև ս.թ. նոյեմբերի 11-ը լրացնել սույն ձևաթուղթը: Հարցերի դեպքում կարող եք գրել CRConference2016@gmail.com էլ.փոստի հասցեին կամ զանգահարել Վորլդ Վիժն Հայաստանի շահերի պաշտպանության ծրագրի ղեկավար Գայանե Վարդանյանին 095 352567 հեռախոսահամարով: